ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«14» հոկտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-42/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2015թ. թիվ 1/73-1/20238-15 գրությամբ ներկայացված «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06909421) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.07.2015թ. թիվ 1/73-1/20238-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ

միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

2. «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 09.11.2015թ. թիվ 01/04.1/3238-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրությանը՝ Ընկերությունը 27.11.2015թ. թիվ 15 գրությամբ հայտնել է, որ «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ն ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտքեր չունի և կից ներկայացրել է Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 25.11.2015թ. տրված թիվ 2-913-2351 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 25.11.2015թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ և 08.07.2015թ. թիվ 24 և թիվ 25 վճարման հանձնարարագրերի պատճենները:

«Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ն 16.12.2015թ. թիվ 16 գրությամբ դիմել է Կենտրոնին և հայտնել, որ Ընկերության ներկայացուցիչը չի կարող ներկա գտնվել ՍՑ-ԳԲԽ-42/15 բողոքը քննող հանձնաժողովի 16.12.2015թ. ժամը 17:30-ին նիստին՝ հիվանդության պատճառով:

3. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.11.15թ. թիվ 02/23/6601-15 գրությամբ Կենտրոնին ներկարկայացրել է «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բանակցային ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 16.12.2015թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-42/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-42/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2015թ. թիվ 1/73-1/20238-15 գրությամբ ներկայացված «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի շենքի ջեռուցման նոր համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի և «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կոնսորցիումն ***18.06.2015թ.*** հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

3. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 24.06.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 01.07.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 450 000 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությամբ որոշել է «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի և «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը մերժել:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-42/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2015թ. թիվ 1/73-1/20238-15, ՀՀ քաղաքաշինության նախարարության 16.11.15թ. թիվ 02/23/6601-15 գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային

եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ն ***18.06.2015թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարության կարիքների համար «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի շենքի ջեռուցման նոր համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ «ՔՆ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բանակցային ընթացակարգին:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել

է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.07.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա (18.06.2015թ.) դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ***:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը:***

Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-42/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ ***Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (18.06.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:***

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից Կենտրոնին 27.11.2015թ. թիվ 15 գրությամբ ներկայացված Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 25.11.2015թ. տրված թիվ 2-913-2351 տեղեկանքին, համաձայն որի Ընկերությունը 25.11.2015թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, ապա անհրաժեշտ է նշել, որ նշված տեղեկանքը տրվել է առ 25.11.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ, միչդեռ ***Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացրել է 18.06.2015թ.*** և հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ*** չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ինչ վերաբերում է 08.07.2015թ. թիվ 24 և թիվ 25 վճարման հանձնարարագրերի պատճեններին, ապա Կենտրոնը արձանագրում է, որ դրանք դուրս են գրվել Ընկերության կողմից Ընթացակարգի մասնակցության հայտ ներկայացնելուց հետո, այն է՝ 08.07.2015թ., մինչդեռ Ընկերության կողմից հայտը ներկայացվել է 18.06.2015թ.:

Հետևաբար Ընկերության կողմից ներկայացված վերոհիշյալ փաստաթղթերը չեն կարող դիտվել որպես հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու փաստը հիմնավորող փաստաթղթեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին տրամադրելու օրվա դրությամբ առկա չէ որևէ տեղեկատվություն «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 18.06.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ,

ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2015թ. թիվ 1/73-1/20238-15 գրությամբ ներկայացված «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06909421) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-42/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան